ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

1986 թվականի օգոստոսի 27-ին Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը Վեհարանում ընդունեց սփյուռքահայ ուսուցիչներին, որոնք Վեհափառ Հայրապետին բերեցին իրենց անկեղծ որդիական զգացումները և Էջմիածնասեր հավատամքը:

Ուսուցիչների խումբը, թվով 51 հոգի, ժամանած աշխարհի տարբեր երկրներից, Հայաստան էր եկել Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հրավերով: Երևանում, ուսուցիչների կատարելագործման ինստիտուտի նախաձեռնությամբ, խմբի անդամների համար կազմակերպվեցին մի շարք դասախոսություններ, նաև այցելություններ՝ Սովետական Հայաստանի տարածքում գտնվող նշանավոր վանքերն ու պատմական հուշարձանները:

Վեհարանում, Վեհափառ Հայրապետի բարիգալստյան խոսքից հետո, Նորին Սրբությանը ներկայացվեցին խմբի անդամները:

Այնուհետև խմբի անդամների և Վեհափառ Հայրապետի միջև տեղի ունեցավ մտերմիկ զրույց՝ հատկապես սփյուռքահայ դպրոցի հուզող հարցերի մասին: Հարցազրույցի վերջում Նորին Սրբությունը նշեց, որ սփյուռքի հայկական համայնքներում շատ ազգային գործեր են կատարվում, բայց հայ ուսուցչի աշխատանքը ամենահերոսականն ու ամենանվիրականն է, որովհետև նա է, որ հայ մանուկների մեջ սերմանում է հայեցի ոգին և մայրենի լեզվի սերը:

Խմբի անդամների կողմից երախտագիտության խոսք ասաց Լիբանանի Հ.Բ.Ը.Մ.-ի Լևոն Նալբարյան վարժարանի հայերենի ուսուցչուհի Լուսինե Թափագյանը:

Սփյուռքահայ ուսուցիչները խոր գոհունակությամբ հրաժեշտ տվեցին Հայոց Հայրապետին՝ ընդունելով նրա օրհնություններն ու ջերմ մաղթանքները:

ԹՂԹԱԿԻՑ

Վեհափառ Հայրապետը սփյուռքահայ ուսուցիչների հետ